



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

08 դեկտեմբերի 2016 թ. թիվ 79-Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 2017Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ 18-Ը ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱԴՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2004թ. հունվարի 25-ի թիվ 59 որոշման 1-ին կետի պահանջներով, ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2016թ. դեկտեմբերի 6-ի թիվ 01/15.1/5399-16 հանձնարարականի՝ մարզի վիճակագրական մարմիններին աջակցություն ցուցաբերելու նպատակով

Կ ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ ԵՄ

1. Ստեղծել անասունների համատարած հաշվառման աշխատանքները կազմակերպող և անցկացնող համատեղ հանձնաժողով հետևյալ կազմով.

- Վ.Սուքոյան - Հանձնաժողովի նախագահ, մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
- Ա.Աչինյան - ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության Տավուշի մարզային վարչության պետ
- Ա.Ամիրխանյան - Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ
- Ս.Քամայան - ՀՀ ԳՆ «Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների Տավուշի մարզային կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
- Վ.Կարապետյան - ՀՀ Տավուշի ԳԱՄԿ ՓԲԸ-ի տնօրեն
- Կ.Մկրտչյան - ՀՀ ԱՎԾ Տավուշի մարզային գործակալության Դիլիջանի տարածքի գլխավոր մասնագետ
- Գ.Վիրաբյան - ՀՀ ԱՎԾ Տավուշի մարզային գործակալության Բերդի տարածքի գլխավոր մասնագետ
- Ա.Խաչատրյան - ՀՀ ԱՎԾ Տավուշի մարզային գործակալության Իջևանի տարածքի գլխավոր մասնագետ
- Ն.Հարությունյան - ՀՀ ԱՎԾ Տավուշի մարզային գործակալության Նոյեմբերյանի տարածքի գլխավոր մասնագետ

2. Հանձնարարել հանձնաժողովին /նախագահ Վ.Սուքոյան/ մինչև 2017թ. հունվարի 18-ը մարզում անցկացնել անասունների հաշվառում և արդյունքների մասին տեղեկատվություն ներկայացնել մարզպետին:

3. Համայնքների ղեկավարներին՝ ստեղծել անասունների համատարած հաշվառում անցկացնող տեղական հանձնաժողովներ՝ ընդգրկելով համայնքների անասնաբույժներին:

4. Կարգադրության կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Վ.Սուքոյանի վրա:



Հ.ԱՐՈՎՅԱՆ